

Արձանագրություն N 8

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի
նիստի

Ներկա էին՝

խորհրդի նախագահ՝ Սուրեն Կարայանը,

խորհրդի անդամներ՝ Պավել Սաֆարյանը, Կարեն Իսախանյանը, Հայկ Այվազյանը,
Կարեն Միրզաբեկյանը, Մելիտա Հակոբյանը, Աբգար Մկրտչյանը և Էմին Աբգարյանը:

Մասնակցում էին՝ Լևոն Իսախանյանը, Արմեն Տերտերյանը, Արարատ Սարգսյանը,
Տարոն Հակոբյանը:

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան:

Օրակարգի հարցերը հաստատվեցին խորհրդի կողմից ևս մեկ անգամ հիշեցվեց, որ յուրաքանչյուր խորհրդի նիստը սկսել նախորդ նիստով տրված հանձնարարականների կատարման մասին հաղորդագրությունը լսելուց հետո:

1. Հաջորդ նիստում ներկայացնել Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի տարեկան գործունեության ծրագիրը, այդ թվում՝ կանխարգելման և իրազեկման աշխատանքների ծրագիրը:

Օրակարգում քննարկման ենթակա հարցեր՝

1. Նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների մասին:
2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2018 թվականի ստուգումների տարեկան ծրագրի հաստատում:
3. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թվականի երրորդ եռամսյակում կատարված աշխատանքների հաշվետվություն:
4. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի երրորդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Լսեցին՝

1. Նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների մասին:

Ձեկուցող՝ Լևոն Խալիկյանը ներկայացրեց նախորդ նիստի ընթացքում տրված հանձնարարականները

Արտահայտվեցին՝ Կարեն Միրզաբեկյանը, Մելիտա Հակոբյանը:

Առաջարկվեց՝ Ընդունել ի գիտություն:

Որոշվեց՝ Ընդունել ի գիտություն:

Կողմ – 8:

Դեմ – 0:

- 2 Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2018 թվականի ստուգումների տարեկան ծրագրի հաստատում:

Ձեկուցող Լևոն Խալիկյանը ներկայացրեց 2018թ. ընթացքում իրականացվող ստուգումների տարեկան ծրագիր

Արտահայտվեցին՝ Մելիտա Հակոբյանը և Կարեն Միրզաբեկյանը, հարց բարձրացնելով՝ թե արդյոք տեսչական մարմինը կհասցնի իրականացնել 2018թ տարեկան ծրագիրում նախատեսված ողջ ստուգումները:

Որոշվեց՝ Հավանություն տալ 2018թ. ստուգումների մասին ծրագրին:

Կողմ – 8:

Դեմ – 0:

3. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թվականի երրորդ եռամսյակում կատարված աշխատանքների հաշվետվություն:

Ձեկուցող՝ Լևոն Խալիկյանը ներկայացրեց 2017թ. երրորդ եռամսյակում կատարված աշխատանքների հաշվետվությունը

Արտահայտվեցին՝ Մելիտա Հակոբյանը:

Առաջարկվեց՝ Ընդունել ի գիտություն :

Որոշվեց՝ Ընդունել ի գիտություն :

Կողմ – 8:

Դեմ – 0:

